



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 34

ՌԵՐԻՐԱԹ

19 04 ՈՍՏՈՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀՈՄԱՐ	ԳՍԻՍՈՒՑ ՀՈՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Շր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՍԵՐ ԿԱԺԱՌԱՑՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԴՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, ձիաղ Պեյ խանին ճակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն բնել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկով ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ րե՛ Կ. Պոլիս, եւ րե՛ Դաւառները, ուրիշ եղան յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիկի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասց 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتبخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده می ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի հասցեսի քիւ 23



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ է անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զգուշութեանց
եւ տալտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹՈՒՅ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն լոյժանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐՎԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԱՎԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ

(1. Մեծ փողոց, Պօս Կարէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

Կ.Ս.Ի.Ս.Թ.Ա

(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ՊՈԼԻՍ

(1. Սինկեր խան, Թիւրքիկի ետեւը.

ՍԱԻԻՏԱՐ

(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

(1. Սուլթան համամ .

(2. Սուլթան Պէյաղլու, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

Չարչը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխանորոքիւն

Մասնաձեռնողեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւղզիլուի տունը:



بوغبنه - جوهريه

BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ


ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinineը կը պարունակէ զուտ սննդային մասերն եզան մօին, ուղեղին,
ողնուղեղին եւ փոսփաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անգուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր
ծանօթ եւ գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգլիոյ, Ճաբոնի եւ Չինոս համ-
բաւուոր բժիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան
ուժասպառութիւն, դաշտութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, քնդիւս
նոր ցղալիւն, սկաւորութիւն, նիւրսութիւն, կուրծքի սկաւորութիւն, անարիւնութիւն եւն:

Անց ամ' մը դ'ործածութիւնը կը հաստատէ իւր անգուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԻՔ, Պահճէ-գարու,
Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաեւ ամէն նշանաւոր դե-
ղարաններու եւ դեղորէից մթերանոցներու քով:



**ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ
ՎԵՀԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ**

ԵՐ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՎԵՀԱՊԵՏԻՆ ԹՈՒՐԲԻՈՅ

Այսօր բովանդակ Թուրքիոյ ընդարձակածաւալ Կայսրութեան միջիռնաւոր հպասակները մէկ սիւրս մէկ հոգի, իրենց սրագին աղօթքը կը բարձրացնեն առ Աստուած վասն արեւշատութեան եւ բարեբաւսիկ տարեդարձին մեր սիրելի Կայսեր՝

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

Օտմանեան Մեծագոր Պետութեան շուրջին եւ հովանւոյն տակ ապաստանող բխրաւոր հպասակները այսօր ցեծութեամբ եւ խախճանութեամբ տոգորուած կրկին եւ կրկին իրենց երախտագիտական եւ ինքնաբոյս մաղթանքները կը նուիրեն առ բարձրեայն Աստուած, որպէս զի պահէ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՎԵՀԱՊԵՏԸ իր փառապանծ գահուն վրայ միշտ եւ հանապազ, որպէս զի Իր ժողովուրդը վայելէ այն բոլոր բարիքները զորս չի գլանար երբեք անխփր :

« Հանրագիտակ » այս բարեպատեհ առթիւ անգամ մը եւս կաղօթեմ վասն արեւշատութեան Նորին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Վեհափառութեան բանկազին կենաց, գոյեղով՝

ԿԵՑՑԷ՛, ՅԱՒԷՐԺ ԿԵՑՑԷ՛

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆ ՂԱԶԻ


ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՄԵՇԱԶՕՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ

ԱՂՕԹՔ

ՀԱԶԱՐ ԱՊՐԻ ՓԱՏԻՇԱՀԸ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆ Բ.



Մեր Սուրբ Գիրքեր ու Սուրբ Հայրեր սաև մեզ պատուիր
 Հաւագոյցի Հեղինակէն օծուած հրաւիր .
 Որ աղօթե՛նք, վասն Արքային հաւապագօր ,
 Ու մաղթե՛նք որ Աստուած ընէ զՆա միշտ հգօր :
 Պահէ՛ Դուն , Տէր , մեծ ինքնակալ Արքան բարի ,
 Գահուն վերայ միշտ անսասան ու միշտ արի ,
 Տարածուի՛ր թող աջդ Աստուածեան ամպհովանի
 Գլխուն վերէն իբր հովանի , հրաշքին դափնի :
 Երկինքին չափ փառքն Իւր բարձր ու աստուած
 Պէս արեւուն պայծառափայլ պահէ յաւիտ .
 Միջինաւոր կեանքնու Տէր կեանքն Արքայի
 Պէս շողիւնին անդորրաւիտ միշտ թող սահի :
 Երկրի վերայ բազաւորն է շուքն Աստուծոյ ,
 Պարսք՝ սակ Անոր մեր ակնածանքն երկիւղածոյ ,
 Թող ծափ զարնեն հպատակներն իւր բիրից բիր
 Բարձր առնելով մեծ Տէր Արքան , երկրին խափու :
 Աղօթք՝ թո՛ւք դեպ է՛ն , շունչե՛ր , ձայնե՛ր ամեն
 Աղօթք ըլլան ձեր խօսք , լեզու՛ք , սուրբ Եղեւեկն ,
 Աղօթք՝ ձեր երգ , մանկո՛ւնք , կուսա՛նք , սակց հրշակներ
 Աղօթք՝ ծաղկո՛ւնք , ձեր անուշից բիր կընդունկներ :
 Աղօթք՝ թո՛չնք , ճոռոդդուններ ձեր հաւօրեն ,
 Աղօթք՝ հողմո՛ւնք , ձեր շշունջներ սարեն , ձորեն
 Ծա՛նք , սօսափիւնք ձեր , դրուիսաց սուրբ հծծիւն ,
 Առուա՛կք , ալիք ձեր , սուրբ հորեաց սիրոյ հեծիւն :
 Աղօթք , այո՛ , ըլլան , բնութի՛ւն , ձայնեղ հաւայն ,
 Ու , մարդկութի՛ւն , բարբառներդ միանգամայն
 Արդար , բարի Կայսերն անգի՛ն կենաց հաւար ,
 Ոյր ճիշդսն է Աղբիր շնորհաց միշտ անհաւար :

Գահակալի՛, ո՛ր մեծ Արքայ, ԴՈՒ յարմա յարեայր,
 Զի մեզնե՛ք բողոքոս Կեանքիդ արեւն իր մայր,
 Վեհապետաց մեծ գործերն եւ իրենց մեծ փառք,
 Զոր ֆերդոդին աստուածարեւն վեհ սառնն ու բառք,
 Դործեր բարի, աշխարհաշէն ու հանրաշահ.
 Ժիշդ մեծագործ Վեհապետ մ'ե մեր ՓԱՏԻՇԱՀ:
 Լնւր մեզ Աստուած, ու պահպանե մեր Թագաւոր,
 Ժիշ ԻՆՔՆ ինչպէս կը պահպանե մեզ ամեն օր,
 Իմաստութիւնդ ԻՐԵՆ տալով արքունակալ,
 Մեր աղօթքներ ի հաւոյս Բո շոյ առ, ընկալ:
 Եւ այսօր երբ երկրագունձին փռածագեւ
 Վեհապետք, ո՛ր Աստուածին ալ երկիրպագեւ,
 Յոսկայս իսկ՝ ինչպիսիքն ուղղեւ բարեւ
 Առ ՓԱՏԻՇԱՀն, որ բիւր ապրի ու շատարեւ.
 Ուրեմն եւ մենք, գերեզմանի՛կ հպատակներ
 Երախտագի՛ք, հաւատարիմ ու անձնուէ՛ր,
 Ուղղե՛նք մեր ծափն ու մեր ԿԵՑԵՑ առ Բարձրեալ,
 Վասն Արքային Օգոստոսիս մեր Ինքնակալ:
 Արքաներու Արքան է Ան կորովաւիս,
 Փառաքանուի՛ ԽԱՆԸ ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ,
 Հեւ Մամուշին ու Աշխարհֆին, Հանրագիտակ՝
 Ինքն ալ գովե Գահակալմանն այս յիշատակ:

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

ՎԱՍՆ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԹԱՆԿԱԳԻՆ ԿԵՆԱՑ

Այսօր Գում-գարուի Մայր եկեղեցւոյ մէջ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը յատուկ բարեմաղթութիւն կը կատարէ վասն արեւշատութեան Ն. Կ. Վեհափառութեան ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՓՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍԵՐ Թանկագին կենաց: Բարեմաղթութեանց կը մասնակցին ամբողջ եպիսկոպոսները, Վարդապետները, Քահանաները, Դպիրները և բոլոր երեւելի ազգայինք:

Այսօր բովանդակ Հայ ժողովուրդը մէկ սիրտ մէկ բերան իր սրտաբուխ աղօթքը կը բարձրացնէ առ բարձրեալն Աստուած, որպէս զի Մեր բազմազութ Արքային բազում տարիներ պարգեւէ, ու միլիոնաւոր հպատակները վայելեն Անոր թիւր բարիքները միշտ և հանապազ:

ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Երկրագունտիս վրայ չկայ մէկը ըլլայ կին, ըլլայ այր, որ չուզէ չը սիրէ գեղեցիկը: Ամէն ոք ջերմապէս կը բաղձայ գեղեցկին նախ իր անձին՝ երկրորդ աչքին համար:

Դիտուած է որ, մարդ արարածը, իր անձնական կազմին դէմքին, վերջապէս իր մարմնական ամբողջութեան վրայ կը գտնէ անկիւն մը, որուն գեղեցիկ անունը կուտայ և որով կը մխիթարուի: Շատ անգամ կիներ հայելիին մէջ նայելով կը մխիթարուին իրենց վրայ ուրիշներէ տարբեր առաւելութիւն մը տեսնելով անոր մէջ, ու այսպէս ոչ ոք կամ շատ քիչ բացառութեամբ կին մը ինքզինքը տգեղ կը գտնէ:

Գեղեցկութիւնը, մանաւանդ կանանց համար էն փնտռուած առաւելութիւնը ըլլալուն, այսօր մարդկային միտքը կզբաղի հնարքներ, նորոյթներ յղանալու, տեսակ տեսակ ջուրեր, փոշիներ, իւղեր, օճառներ, որոնց պաշտօնն է՝ կինը գեղեցկացնել ու բնականէն տարբեր երեւոյթ մը տալ անոնց: Այսօր, ամբողջ հին և նոր աշխարհին մէջ, անթիւ անհամար գործարաններ գիշեր ցերեկ կը բանին, միլիոնաւոր գործաւորներ կաշխատին կինը գեղեցկացնելու տարբեր բաղադրութիւններ պատրաստելու համար, որոնք ջերմապէս կը փնտռուին ու կը գործածուին կանացի շրջանակներու մէջ:

Դիտուած է որ, կնոջ մը մէկ տարուան մէջ ծախսած գումարին երեք քառորդը գեղեցկանալու, բնականէն աւելի վեր առտիճանի մը հասնելու ձգտումին համար է: Էրիկ մարդոց իտէալն է, մաքուր և կոկիկ երեւալ, իսկ կանանց միակ և միմիակ բաղձանքն է գեղեցկանալը:

Կանանց մէջ այս սին ու Փանթեզի գաղափարը այնքան յառաջ դացած է՝ որ շատ կիներ գեղեցկանալու յուսով ըրած արտառոց թուալէթներով կ'որոշնջուցած են իրենց բնական գեղեցկութիւնը ու լսկ ֆառիսաթիւռ մը դարձած են դիտողին աչքին:

Այս պարագան յիշել կուտայ ինձ մեր մէջ կատարուած աղջկեցեաները: Մեր մէջ աղոռորցնելու գաղափարը այնքան արմատացած է, որ երբ մայր մը իր աղջիկը առաջին անգամ իր ապագայ փեսացուն դէմը պիտի հանէ, ալ զուռ դրացի ժողովուած, կսկսին այնպիսի արտառոց թուալէթ մը տալ աղջկան, որ խեղճին բնական դիմագիծերը կը կորսուին, գլխուն մազերը անտանելի ելևէջներու կենթարկուին, մորթը բուտուայէն, և տեսակ տեսակ իւղերէն ծխած ձև մը կառնէ, և արդիւնքը սա կըլլայ որ աչքի խաւ երեւնալով եղած աւելորդութիւնները փոխանակ յաշոյլութիւն ձեռք բերելու, հակառակ և խարուսիկ վախճանի մը կը հասցնեն ձեռնարկը:

Գեղեցկանալու համար գուրաքն՝ այսինքն արուեստական ինչ որ գործածուի կատարեալ և տեւական արդիւնք մը չի կրնար տալ: Նախախնամութեան պարգեւած բնական գիծերը ո՛ր և է արուեստական ողորջով կարելի չէ բարե-

փոխել, եթէ ըլլայ իսկ ժամանակաւոր և վաղանցուկ փայլ մը միայն կրնայ
ձեռք բերուիլ :

Ըստ իս, մեր կիրները եթէ կուզեն գեղեցկութիւնը վայելել և միշտ ունենալ այդ առաւելութիւնը պէտք է, արուեստական թուալէթէն առաջ, առողջապահական օրէնքներուն դիմեն, վստահ ըլլալով՝ թէ յաջողութիւնը անխուսափելի պիտի ըլլայ :

Գեղեցկութեան գալտնիքը, շատ պարզ և դիւրամատչելի է պէտք է ըսել, հարուստէն է՛ն աղքատը կրնայ գործադրել, և գործադրելու մէջ ալ ո՛ր և է դժուարութիւն չիկայ: Պարզ ջուր, ահա էն էական տարրը թուալէթի համար:

Երբ անգամ մը ընդունուի սա բացարձակ ճշմարտութիւնը թէ, մարմնական առողջութիւնը ամէն բանէ վեր, ամէն բանէ առաջ էն նկատելի բանն է կեանքի տեւողութեան մէջ, պարզ ջուրը անոր անբաժան նեցուկը պէտք է համարուի, քանի որ ջուրով ամէն ինչ կարելի է ձեռք բերել :


Կը հիանամ շիտակը, երբ կը տեսնեմ օրիորդներ, մանաւանդ Անգղիացի
միսեր, որոնք մաքուր տարազներու մէջ բնական գեղեցկութիւննին դուրս կու-
տան, և որոնց դէմքին վրայ, թուալէթի, բազմատեսակ փոշիները, լւղերը ևն.
չեն տեսնուիր, այլ յոյ բնականը :

Մի կարծեք թէ սիրելի քոյրերս, բուսուան քսելով կը ճերմկիք, և կամ նմանօրինակ իւղերը ծեփուելով կը գեղեցկանանաք, այդ ճեր գործածած տարրերը ալ աւելի կը ազեղցնեն զձեզ, կը խանծեն ձեր մորթը, և արդիւնքը սա կըլլայ որ ձեր երիտասարդ տարիքին մէջ պառաւի մը փոթ փոթ դիմագիծերը կուենաք, կը թօշնիք, կը խամրիք:

Մեր այս արդար գիտողութիւններուն վրայօք ընդարձակ տեղեկութիւն առնելու համար ջերմապէս կը յանձնարարենք Տիար Սամուէլ Գ. Վարժապետեանի թարգմանած հատորը, գեղեցկութեան վրայօք, որուն Եւրոպացի հեղինակը ընդարձակօրէն խօսած է այս էական խնդրոյն մանրամասնութեանց վրայ։ Օգտակար է կարդալ այդ հատորը ամէն անոնց համար, որոնք կուզեն գեղեցկանալ բնական մէթոտով մը, և ոչ թէ արուեստական խամրիչ պատրաստութիւններով։

Վ. ՓԼՓԼԶԵԼԻ,

Կ. ՓԱՓԱԶԵԱՆ



4 1 0 2 5 4 5 2

Վեհ ու անպիղծ խորանին վրայ բարձրացիր,
Սուրբ Սկիինին հառագայքը կ'երկարի,
Ուր ակնաւկը անզգային չկաթիր,
Մինչ իմ սիրքս վախով լեցած է կարի :

Ու ահա եւ աստուծային վախին տակ,
Կը խոնարհիմ, ո՛հ, մեկուսի, իւրովին,
Եւ կը ծընգեմ, ցաւերու մեջ անյասակ,
Ես յանցանքի ուղեհանն եմ տակաւին :

Ու գղջումի դողերու մեջ եմ գալսնի ,
 Իմ ծովացած մեղեհրուս օսկ խեղդուած ,
 Ուր զգացման բուռն յուզումեն կը հասնի
 Սիրքս, հոգիս. ո՛հ, կը գրդջամ, ով Աստւած:

Կը մօտենամ պահ մ'եթ անցալիդ Սկիհին,
Ու կը ծընգեմ, կը փրսփրսամ դողդոջուն,
«Մեղա՛յ, մեռե՛, գրած Աստուած երկնային»,
Կը զղջամ հոն, խրոուլ սրբով մ'եհեհուն;
ՍՈՎՐԱՏ՝ ՍԱՐԱՅԵԱՆ

ՄՇԱԿՆԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

Վահան Մալէճեան պարզ հոգի մըն է ինչ որ կայ իր մէջ բնական է ու ինքնափուլ, յատկութիւն մը, որուն բացակայութիւնը ամենէն աւելի սա տարիներս է որ կը նշմարուի մեր գրողներուն վրայ, Արուստակեալ ճիգեր ըրած չէ բանաստեղծի պըսակին արժանանալու համար, այլ իր բնածին խանդին ու *humeur*ին շնորհիւ բացուած են իր առջև դռները պառնասեան պարտէզին:

Յրանսացի բանաստեղծի մը կը հարցուի թէ ո՞րն է իր ցաւը. — « Իմ ամենէն մեծ վիշտս բանաստեղծ ըլլալս է » կը պատասխանէ: Ուրեմն ի՞նչ մեծ գորութիւն է ներշնչումը եթէ անիկա բնական ըլլայ:

Մալէճեանի ոճը հայելիի մը կը նմանի ու իր սիրտը վճիտ ջուրի, մինչև յատակը կարելի է տեսնել յստակօրէն. *intrigue*ներէ զերծ է բոլորովին, բառերու փնտռումով հիւսուած երգերու տպաւորութիւնը չեն ըներ երբեք իր գրուածքները, ինչ որ հոգին զգայ, ինչ որ *au fond* բղխի, այն է արտադրածը: Մեր մէջ միակ բանաստեղծն է որ աւելի կը մօտենայ Դուրեանին, մեղամաղձտութեամբ և արտակարգօրէն *énergique* սիրով այնչափ ներդաշնակ և յաջող ընդելուզուած բանաստեղծութիւններով: Մալէճեան կասկի միայն սիրելու, միայն պաշտելու համար գեղեցիկ սեւը: Իր կեանքը, իր սիրտը, իր հոգին վերջապէս ամբողջ էութիւնը անոր մէջ կը տեսնէ. — « Իմ սիրտս՝ քու սիրտիդ մէջ, ո՞վ իմ սէրս, ո՞վ իմ հաւատքս, ո՞վ իմ մահս . . . »:

Դեռ շատ երիտասարդ սկսած է զգայուն տղեր արտադրել: Բսան տարու չեղած մասնակցած է գրական գործունէութիւններու և խանդով զեղուն բանաստեղծութիւններ գրած է գրական բացառիկ թիւերու մէջ Պէրպէրեանի, Թէրզեանի պէս անուններու քով փայլելով: Իր այդ տարիքին մէջ հեղինակը եղած է բանաստեղծական հատորի մը Պատանեկան մրմունջք: Այս գիրքը հիմա սպառած ըլլալով թէպէտև

չենք տեսած, սակայն անոր պարունակութենէն արտատուած կտորներ տեսած ենք հաւաքածոներու մէջ ու նոյն ժամանակին հրատարակուած գրական քրոնիկներու և գրախօսականներու մէջ գովեստներ կարդացած ենք: Այն ատեն պատանի երեւակայութեամբ սէրը տարբեր ակնոցով դիտած է: Ապագային համար յուսալից, հատումէ աւելի փառաբանութիւններ են իր սիրային մեղեդիները, ա՛յնչափ անուշ, ա՛յնչափ դրաւիչ: Վերջը ժակայն երբ տարիներու ընթացքին մէջ կը փոխուին Մալէճեանի գաղափարները, կը զղջայ իր Պատանեկան մրմունջքը հրատարակած ըլլալուն համար ու նոյն իսկ գրավաճառներուն քով մնացած օրինակները հաւաքելու և ոչնչացնելու դադափարն ալ ունեցած է: Իր երգերուն մէջ հատնողի, տառապողի սիրտ մը կը թըրթռայ, կոյր սէր մը ունի, անգիտակից տարփանք մը՝ որ շատ հեռուները տարած է զինք:

Մոմ ինչպէս յար կը սպառի սուրբ Տիբաճօր Պաշկերին մօս, մեր սիրեց այնպէս հե՛ք բուրձառ կը մըխայ մի՛ս մեր սիրք մի՛ս վիրաւոր:

Բայց այդ երգերն ու սեր ձեզի չեն ազդեր, Դուք փերթող չե՛ք հասկընար մինչ՝ ձեր սեր . . .

Ուրիշ տեղ մը. —

Քեզի համար պիտի երգեմ աղեկեզ,
Տաղերը զոր ոչ մեկ փերթող դեռ լացաւ

Արձակ գրել փորձած չէ: Գրական և քննադատական վէճերէ խուսաբող մը եղած է միշտ, աղմուկի, պայքարի մարդ չէ եղած ու անոնց մէջ չէ փնտռած իր անունին ժողովրդականացումը, այլ ինքն իր մէջ ամփոփուած լացած է իր սրտին ցաւերը: Ասով հանդերձ շատ քիչ անգամներ արձակ ալ գրած է, արձակներ որոնք քանի մը ու տանաւորներ կարծեն բանաստեղծական տեսակէտով: Սօրթեմո խորագրով (Մասիս 1902 թիւ 23) իր Ուղեւորի տպաւորութիւնը *nonpareil* գոհար մըն է բանաստեղծական, որուն մէջ « Իտալիոյ կապոյտ եր-

կինքին անուշ հանդարտութեան տակ» Միջերկրականի հմայքոտ աիունքին վրայ բուսած այդ ծաղիկին կուլայ ամբողջ դառնութիւնը իր վերքերով լեցուն սիրտին, նոյն այդ էջերուն մէջ ծրարելով երազուած սիրոյ մը խորտակումին և փախչող երջանկութեան մը առթած թախծութիւնը:

«Երգը զոր պիտի երգեմ քեզի, հիւանդ երգ մըն է՝ մուցուած սիրտէն բղխած ուր վիշտը — նարկիսի նման — անդադար նայեցաւ իր վայրագ հրապոյրներուն սիրահարած: Բայց վիրաւոր սիրտի մը երգն է ան վերջապէս, և իր արձագանգը պիտի հալի պուրակներուդ շուքին մէջ և կոհակներուդ լքուած քարափին վրայ հոգեվարքի բաղխումին հետ»:

Նոյն յօդուածին մէջ տեսէք թէ ի՞նչպէս կարտայայտէ գեղեցկութեան մասին ունեցած տեսլականը:

«... Բայց ես կը սիրեմ տեսնել գեղեցկութիւնները կիսաթափանց քօղի մը մէջ շղարշուած, անոնք աւելի գեղեցիկ կ'ըլլան՝ լոյսին տակ՝ մերկութիւնը կը վիրաւորէ աչքը և չլացումին մէջէն հրապոյրները կը պրիսմանան»:

Քիչ մը վերը Դուրեանի խօսքը ըրինք, և կարծեմ թէ Մալէզեանի գործերուն ուսումնասիրութիւնը ըրած պահուս աւելորդ չըլլայ ըսել թէ այն ալ «Տրտունջ» ին անմահ հեղինակին նման գոնէ անգամ մը գրած է խիզախ ոտանաւոր մը Ներումը «Մամուլ» ի մէջ:

Սրբիս վերեւը ինչպէս կը կոսեմ
ձակասս է մթնած գիշերներու պէս
Ու կը տառապիմ ցաւն յաւիտեանական:

Դուն բարի Աստուած դուն կը խորհակես
Իդձեռս ու երազ ու Տեւ չես գրքար
Բայց ես, ո՞հ, քեզի կը ներեմ ես յար:

Շիտակը վեհանձն ներում բայց
Դուրեան մահուան ա'յնչափ մօտ, սարսուռներու,
հազիրու և ջերմութիւններու նուա-
ներուն մէջ արտադրած Տրտունջին յաջորդ-
օրն իսկ գրած է Զոյլումը: Վահանը ատանկ
բան մը չըրաւ սակայն:

Իր ընտանեկան մէկ նամակին մէջ — զար

անցեալ տարի պատահամբ ձեռքս անցաւ —
կը գրէր Դահլիշէն «Քանի մը օրէ ի վեր
տաքը նուազած է, օդերը ցուրտ կերթան
և անիծեալ հազս նորէն սկսաւ նեղել զիս:
Եթէ շարունակուի այս վիճակը դէպի հա-
րաւ ճամբորդութիւն մը պիտի ընեմ»: Իր
բունն սէրը, հակառակ բժիշկ հայրիկ մը
ունենալուն, քիչ մը սուղի նստաւ իրեն,
ու հիմա Եգիպտոսի ջերմ կլիմային տակ
կը թափառի անոր հորիզոնին մէջ քիչ
մը աւելի երկարատեւ ընելու համար պլպլա-
ցող մոմին բոցէ լեզուակը: Ասով հանդերձ
«Երջանիկ մահ»ն է իր իտեալը, մեռնի՛ր սի-
րած ըլլալու համար միայն, մեռնի՛ր սէրը
հետապնդած ատեն, նուիրական պարտակա-
նութիւն մըն է իրեն համար:

Օ՛հ, ինչ փոյթ որ ծայրն այդ ճամբուն չի հասած,
Իս հասցընէ քեզ սիրելուս այդ գաղտնի,
Ձեռքս՝ փունջեր, գիրքս՝ քննար, աչքս՝ լաց
Մե՛ղք, չի հանչնաս պիտի այդ մահն երջանիկ:

Ապերջանիկ «Երջանիկ մահ» ցաւերով,
չաղուրուած — որուն կ'ըզձաս դուն քու
սիրարբշիւի մոլորանքներուդ մէջ — քու
օմեղադ ըլլայ թերեւս...

Քանգի դալկահար հոգիները վաղ՝
Ըլլալ գիտնալուն համար կը մեռնին:

Տրապիզոն

ԵՐ. Մ. ՃԻՒՀԵՐԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղտնիք Գեղեցկութեան, Առողջութեան
եւ Երկայնակեցութեան: Փրոֆ. Պոյտ Լէյնըրտ:
Թարգմանեց Անգղիերէնէ, Սամուէլ Գ. Վար-
ժապետեան: Կ. Պոլս, Տպագրութիւն, Յ.
Մատթէոսեան, 1905:

Հետաքրքրաշարժ, հրապուրիչ, զբօսալի
և ամէն սեռի ու հասակի յոյժ պիտանի
գրքոյկ մը, 248 երեսներէ բաղկացեալ:
Թղթակազմին գինն է 8 դահ., լաթակազ-
մինը՝ 10 դահ.: 10 է աւելի գնողներու 15
առ հարիւր, և 50 է աւելի գնողներու 20
առ հարիւր զեղչ:

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Գ Ը Ն Ա Լ Ը

Առանց Տօքթ. Խնդիրեանին կարծիքը առնելու, տասնօրեայ հիւանդութենէն վերջ, իբր օգտփոխութիւն Աստուածածնայ կիրակին գացի Գրնալը, ուր պատշաճ էր . . . գնալը :

Մարմարայի չորս ծովաչիպաններուն առաջինը, ինչպէս կանուանէ Մեծայարգ բարեկամս Վ. Փափազեան, իր մինինիկ դիրքով և գեղեցիկ օգով դերթէ առաջինն է իր միւս նմաններուն մէջ, բայց երկրորդ, լիւքսի կրկնակ տեսակէտներով ըսենք թէ չի կրնար հաւասարիլ անոնց : Ամբողջ կըղզիին մէկ կողմը միայն բնակելի է, իսկ միւս երեք կողմերը անապատ կը մնան դեռ հովին ու ծովին նշաւակ :

Բռօթի աշխարհագրական տեսակէտով նկարագրականը այսքան մը ընելէս վերջ, ձեզի պատմեմ ներքին բարոյականը, զոր աչքովս տեսնալու պատիւը ունեցայ ինչպէս ըսի, կիրակի :

Շոգենաւը սառտէլայի ֆըշի մը դարձած էր այդ առտուն, երբ Գատը գիւղ եկաւ հանդիպիլ : Կիրակիները կղզիները բանող շոգենաւները կը հեծեն այն կարգի արուէ գ բազմութենէն, որոնք 40-50 ոսկի տալով գիւղ չեն երթար, այլ կը գոհանան, կիրակի օրերը հալայի, թէյզէյի, խնամիի տուները, վրաձգողութիւն ընելով, ընդհանրապէս Յոյն, Հայ, Եւրոպացի և դեզի համար Հրեայ մը կարելի չէ տեսնել :

Ժամը երկուքն էր, երբ կղզիներու շոգենաւը մօտեցաւ Գատը գիւղ, ու մենք, այսինքն իբր երկու հարիւր յաճախորդ, Սկիւտարցիներուն քար հանելու չափ ճարպիկ, զիրար հրմշակելով ներս մտանք, ու մէջերնիս կային անանկ լայն սիրտ տիկիններ, որոնք առաջուց «վերը նստինք, որպէս զի օդ առնենք» ըսելով, ու բէշերնին ա լա Բեռապիէն բռնած ներս մտան շոգենաւէն, ու balle fragile պէս չիտակ քամառան իջան ոտքի վրայ չի մնալու հա-

մար, և կարծեմ թէ հոն քրտինքէն պուլուլանին եօխ եղաւ, ինչպէս նաեւ մոլթնուլուսուն քսուած բուտանին :

Շոգենաւին մէջ անցած դարձածը նկարագրել չէ միտքս, քանի որ ես ալ հարսնիքի մօմի պէս ոտքի վրայ մնացի, տեսնողին աչքին՝ ալաֆուանկայի համար, իսկ բուն ինծի իբր պատիժ կիրակնօրեայ թափառումիս :

Երկուք ու կէսին հասանք Գրնալը, որուն նաւամատոյցին մօտ ահագին բազմութիւն մը խնուած էր, զոյգ զոյգ, երեք երեք, չորս չորս, և որոնց մէջ էն թուալէթլին անպատճառ Սուրբիկ մը, Մաքրիկ մը, Երանիկ մը, վերջապէս Աստուածածնայ ածականներէն մէկը կար : Եւ որովհետեւ ես ինծի սպասող մը չունէի, դաւադանիս ընկերակցութեամբ դուրս ելայ շոգենաւէն, և լայն շունչ մը առի : Բիշ մը անդին (անունով) Տէպառքատէսին անկիւնը Արեւելեան ընտիր խումբ մը, թերեւս շոգենաւէն ելողներուն ի պատիւ, ալ կիյէն պտղ ագլըմը, իլլի մալիլիմ մալիլիմը կերգէին վզերնուն երակները պայթեցնելու չափ ուժգին, ու ներսը բաւական թուով ընտանիքներ կիրակիի առաւօտը կը վայելէին կրոր քարէսեղաններու շուրջ : Գրնալը ամառանոց գացողները մեղքը կը մանան, եթէ կիրակի առաւօտները հոգ չերթան չի նստին, և իրաւունք ալ ունին, քանի որ ուրիշ զբօսալի տեղ մը չունին խեղճերը :

Գայմազեան Պետրոսիկ աղա՝ խնդումներես, գիրուկ, դէմքը կարմրուկ, գրպանը չեմ գիտեր . . . ինքը խօսք մըռուկ անձ մըն է, զոր առաջուց ճանչնալու պատիւը ունէի, մի քանի տարիէ ի վեր այդ զբօսարանը բռնած է, և ուրկէ յանդուս գոհ են ամէն անոնք, որոնք կը դիմեն այդ կղզին : Զիս տեսնելուն անմիջապէս դիմաւորեց և զիս առաջնորդեց ներս, ուր խրախճանութիւնը ծայր աստիճան հասած էր : Ըշմարիտը խօսելով՝ Պետրոսիկ աղան այն աստիճան մաքուր ու կոկիկ բռնած է գործը, որուն նմանը ուրիշ չատ մը արուարձանները դժուար է գտնել ու տեսնել : Ինքը ձեռքով վը կը պատրաստէ աղանդերները, և ըմպելիներու աղնիւ տեսակը, ժողովուրդին ճա-

չակին ձգելով անոնք, քիմքին յարմարը գնած է, առանց դրամագլուխին քանակը նկատի առնելու: Արդէն իր խնդում դէմքը անգամ մը տեսնողը եթէ ոչ ճիւղնիւն, գէթ երկու գաւաթ կը խմէ, որպէս զի Պետրոսիկ աղային գրպանը դէմքին հետ քօսքիւմ քօսքիւմ ըլլայ կարմրուկ:

Մինչ այս մինչ այն, տակաւ օթէշներու յաճախորդները, իրենց փափուկ քունէն յափրացած կը թափին Տէպլաքատէն: Ասկէ 20 տարի առաջ կը պատմեն թէ Գնալըի մէջ երբ, Ֆիստանով կամ թուալէթով մէկը պտըտի, ուշադրութիւն կը դրաւէ եղբր, իսկ հիմա, սպասուելները անգամ քօռաւելով կը պտըտկին կոր, ու պարզ միջոնները լաթէ սկառքիներով:

Գնալը ոտք կոխողը, անպատճառ հոն գտնուողներուն հետ սերտ յարաբերութիւն մը կ'ունենայ, այնքան սերտ՝ որ տեսնողը ահագին ընտանիք մը կը կարծէ հող տեղի հնախախտները, սակայն ափսոս որ, ոչ մէկ տարի Մանգուսի արձանագրութեանց բաժնին մէջ կը կարդանք թէ՝ այսինչը այսինչին աղջկանը հետ նշանուեր է . . . :

Բոլոր ծանօթներս, որոնք ամիս մը առաջէն հող դիմած էին, գրեթէ անճանաչ զիրութիւն մը եկած է վրանին, այնպէս որ շատ ընտանիքներ իրենց հետը տարած տարազները վրանուն նեղ գալուն անգործածելի՝ սնտուկը ձգած են:

Մենք առանց ուրիշներու հետ զբաղելու, մի քանի բարեկամներ կուշտ ու կուռ վառ յեղեցինք նուագը: Ներկայներուն մէջ կը նշմարուէին՝ ի մէջ այլոց (այս բանաձեւը հարսնիքէ և մեռելական թափօրէ դուրս է) Ռ. Յ. Պէրպէրեան, և Աղեքսանդր Փանոսեան էֆէնտիները, որոնք քաջուած գրական ասպարէզէն, իրենց մտքէն աւելի մարմիններն կը կազդուրէին:

Ժամացոյցին սլաքը որչափ կը յառաջանար, նոյնչափ արեւը մարդաբէպապը կը դարձնէր կղզիին վրայ, ու ստամոքսները իրենց ձգնաժամի յետին ողջոյնը կուտային, երբ օթէլին զանգակը հրաւէր կարգաց իր յաճախորդներուն ճաշի: Կարծես թէ բոլորն

ալ այդ ազդարար նշանին կսպասէին, հինգ վայրկեանի մէջ այն՝ եռուզեռ քաղինձն ձմրան յատուկ արմտիքի թափուր շտեմարան մը դարձաւ, ու մենք ալ մեր կարգին գացինք ստամոքսնիս պարտկելու:

Հաւատացէք, Գնալըի ցերեկը անտանելի է, և այս դիտողը բնիկները շատ լաւ սովորութիւն ըրած են քունով անցընել:

Իսկ երեկոյին ժամը տասնէն վերջ խորախճանութիւնը ալ աւելի էր, պէտք է ըսել, առաւօտեան լեւե ալ թուալէթին տեղ, ա ժուռ գուլպաները, օնտիլի մագերը, ճերմակ հագուստները, բոլորն ալ անձրեւէն վերջ սլքակացող խղունջներու պէս հոս հոն սկսան երեւնալ: Ինձ այնպէս կերելի թէ Գնալը գացողները անպատճառ հետերնին քօսքաներով բռնուր յօս տարած են, որովհետեւ չի տեսայ կին մը կամ օրիորդ մը որ ծեփուած չըլլար այդ երանելի փոշիով:

Անհաւատալի կը թուի ինձ սա կարծիքը թէ՝ Գնալը գացողները անպատճառ օդափոխութեան պէտքը զգացողները կըլլան, քանի որ չի տեսայ մէկը որուն դէմքը հաստատեր այդ զրոյցը, կինները Պարտիզակցիներու պէս կաս կարմիր, իսկ այրերէն շատերը ըմբռնամարտերու պէս բանկառու կերեւոյթ մը ունէին:

Սակայն ուրախ եմ յայտարարելու որ ծուկութիւն ըսուած բանը Գնալըի մէջ չի տեսայ, ընդհանուր լրջութիւն մը տիրող բնոյթն էր բոլոր կղզեցւոց, ըլլայ արու ըլլայ էգ:

Ժամը տասն և մէկին մօտ երբ հեռուէն շոգենաւ իր ցուկը ցոյց տուաւ Պուռկազի ետեւէն, արդէն բոլոր ընտանիքները Տէպլաքատէնէն իրենց էն բոխմօ թուալէթներով. ալ տեսնալու արժանի էր Հայուկնկան ստիպումը հիւրերուն հանդէպ, որոնք պէս զի կենան:

— Խըյանէթ, մէկ աս գիշեր կենալու էիք . . .

— Խաչ որ կոտորուեցանք, ինչ կըլլար կենայիք նէ, վաղն ալ կիրակի էր զաթը . . .

— Մենք քեզի անհանգիստ չենք ըներ . . . մեզի նեղ կընենք ձեզի տեղ . . .

— Աս ի՞նչ գալ ի՞նչ երթալ է . . . հէլէ իրար տեսնայի՞նք . . .

— Վար չինջած նորէն օր մը եկէք . . . եանի խըյամէթ կիւճէնթիութիւն կ'ելլայ . . .

— Հոստեղի զէֆքը գիշերն է, դուք իսէ կ'իշնաք կոր . . . :

Վերջապէս նմանօրինակ քօմբլիմանները օդը կը գլորէին, ու մէկ կողմէն ահագին բազմութիւն մը շոգենաւը կը խուժէր ժամ առաջ տիտիկ ընելու համար վերի քեռասը:

Ու մինչ հսկայ անիւնները սկսան ջուրը ձեծել ու սահել Մարմարայի վրայէն դէպ ի Գատը գիւղ, հեռուէն դեռ կը լսուէր նուազածուաց հեշտալուր երգերը, ինչպէս նաև Պետրոսիկ աղայի հրամայական եղանակը, որ կըսէր,

— Կեցողն ալ ողջ ըլլայ գացողն ալ . . . չիշէ պիտա՛ պի՛ր . . . առողջութեան պի՛րապի՛ր . . . :

Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՀԱՅՈՒՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՏԱՐԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կ'վարեն իճն անդամներէ բաղկացած Խնամակալութիւն մը, եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կու տայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափական եւ այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կ'սրուի հայերէն եւ անգլ. լեզուներուն. կ'ուսուցանին նաեւ քուրճեքն եւ Ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու բնդարձակ եւ օդաւէժ շէնքերը, ինչպէս նաեւ խնամակալութեան երկու բժիշկ անդամներ մեծապէս կ'ապահովեն առականութիւններուն առողջութիւնը: Անասօլուի երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչեւ քաղաքս կ'երկարի, նամբորդութիւնը խիստ դիւրին եւ հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարեբոսակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնավճարով պէժ է հասուցանել: Դաւանակի դասի համար 5 կամ 3 ոսկի կ'պահանջուի, դասառութեան քիւին համեմատ: Երգեհոնի դասի համար 2 1/2 ոսկի կ'պահանջուի: Վարժարանին ԻԱ. տարեօրջանը կ'սկսի Սեպտ. 13 (Ն. Տ.), Դե. իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրն ուղղորդելուն ձրի կ'ըլկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիքի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տոմ. Ս. Էֆ. Գալպանեանի, Ասեմապետ Խնամակալութեան, Ատարազար: 8—5

ՏՔՆԱԺԱՄԸ

Կը ծանրանայ սփնապահը գիշերուան, Տարուան մը պէս երկար, անծայր ու անհուն, Ովկեանի պէս անյաւաճ, անսահման, Որ կ'անհետի խաւարին մեջն ամպերուն:

Ո՛հ, հոգւոյս մէջ խրդնի մը պէս կը բնայ՝ Բան մ'անծանօթ, զգացում մը խօսկան, Որ արբունքի երազներով հեզաստան, Կը կուտակուի ցաւերուս հետ մոլեկան:

Ես կը դառնամ կողերուս վրայ քնահաս Անուշաներու ցնորհներով անյասակ, Հիւանդ սրտի ըղձաճներով, անվրհաս, Ու խրդնահար, դեռ քրքնութեան բեռին տակ:

. . . Ու կ'արթննայ մինչ վարդ այգը առտուան, Յակիմի պէս բիւրեղացած պրսպրդուն, Մինչդեռ կուրծքիս ելեւեջներն կը հեւան, Երազանքի խաբկանքներովն ողորուն:

ԻՍԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՍԱՆԹԻՄ ՄԻ ՏԱՄ

ԱՌԱՆՑ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՅԵԼԵԼՈՒ

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՆՇ ՇՈՒԿԱՅ, Գուլումճըլար փողոց Թիւ 13

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հագուստի, ներմակեղեքի, Ֆանթեզիի, աղամանդի, ժամացոյցներու, շոքալներու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը:

ԵՒ ԳԻՏԵՔ ԽՇՁ ՊԱՅՄԱՆԱՒ

Ա. ՊԱՌԻԿ

Գնած ապրանքնուդ % 20 ը կանխիկ, մնացեալը չաբաթական % 5 զրշ վճարելով: Կանխիկ գնողին % 5 զեղչ:

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծանուցանել իր բազմաթիւ յաճախորդներուն թէ՛ մօտ առնէն պիտի աւելցնէ տեսակը իր ապրանքներուն, զորս պիտի հրատարակենք յաջորդիւ:

ԱՆՈՒՆԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՆ

[ԿԱՆԱՑԻ ԲՆՈՅԹՆԵՐ]



Մեր բաղձաթիւ ընթերցողաց ամառնա-
յին բերանփոխ մը հրամցնելու մտօք, այս
անգամ մեր գրութեան նիւթ կառնենք կա-
նացի անուններու համապատասխան ընդթ-
ները: Մեր այս գրութեան մէջ ո՛ր է նկա-
տում և կանխամտածում չունինք, այնպէս
որ այբուբենի կարգաւ գրուած տողերէն
պէտք չէ որ վիրաւորուին ամէն անոնք, ո-
րոնց բուն անունը կը յարմարի գրուածքին:
Պարզ կատակի ձեւով նորոյթ մըն է այս
յղացումը, ուրկէ առնուելու պատճառ մը
պէտք չէ ունենան մեր յարգելի ընթերցու-
հիները:

Ա. Գ. Ա. Պ. Ի

Ծնողքներէն աւելի կնքահայրները կը
սիրեն այս անունը, և ընդհանրապէս մալի-
ֆաթուռաճիի ազջիկներուն կուտան այս ա-
նունը: Ագապիները սովորաբար դեղին մա-
զերով կըլլան, երկայնահասակ և մստո:
Ամուսնութեան մասին երբէք նեղութիւն
չեն կրեր, անպատճառ մէկը կեւայ թեկ-
նածու, այնպէս որ Ագապի անունը կրող
քսանէն վեր ազջիկ մը շատ դժուար է
գտնելը: Սոսկալի ինտոսի կըլլան անոնք,
«այո» կըսեն գլուխ կերերցնեն, սակայն
գիտցածնուն չեն չեղիր և ուղտի պէս վրէժ
կը պահեն ներսիդինին: Ընդհանրապէս Ա-
գապիներուն ներքին ճերմակեղէնները աղ-
տոտ կըլլան, բայց թուալէթի շատ նախան-
ձախնդիր, շատ դրամ կը վատնեն արդու-
ղարդի համար, ոսկիներ կը մսխեն, սա-
կայն հագածնին չեղեւար, քիչ մը թափթը-
փած կըլլան: Ագապիները, իրենց ամուսի-
նը կը սիրեն «ատէթ է տէյի»: Երբ զաւակ
մը ունենան, ալ իրենց ամուսինն ալ կը
մոռնան ինքզինքնին ալ, այնքան կիցիան
իրենց սողոց ետեւէն: Գուլպաներնուն տա-
կը անպատճառ կարկտան կըլլայ և կօշիկ-
ներնուն եօքքները մէկ մէկ կողմէն մաշած,
ծուռ կը կոխեն, չիտակ կը խօսին, և բար-

կացած ատեննին կապ կարմիր կը կտրին
բանձարի պէս և չուտով չեն հանգըս-
տանար:

Երկու բանի փափաք կունենան Ագա-
պիները, տիք պոյերնուն ռօպատիքի մը և
խօսք մտիկ ընող էրկան մը:

Բ. ԵՐՈՒՋԻԿ

Այս անունը կրողները եթէ ոչ գեղեցիկ,
գէթ չիրին կըլլան, և լեզուանի: Դժբաղ-
դաբար ամուսիննին իրենցմէ առաջ կը մեռ-
նի ու իրենք որբեւայրի կը մնան սե քոհք-
ներուն մէջ: Աղէկ կերակուր եփել կը գիտ-
նան, ինչպէս նաեւ անուշ և չուռուպներու
պատրաստութիւնը: Իրենց զաւակներէն ա-
ւելի էրիկնին կը սիրեն, այնպէս որ ձմեռը
վերմակնին կը հանեն ամուսիններնուն վրայ
կուտան, և ամառը քուններնին կը ծախեն,
թախթա պիթի կը գթուեն ամուսիններնուն
հանգիստին համար: Կռիւ ընելու մէջ քար
կը հանեն իրենց սեռակիցներուն, և բար-
կացած ատեննին փոխանակ կարմրելու կը
ճերմկին: Հագած գուլպանն իրենք կը
հիւսեն և ամիսը մէկ անգամ բաղնիք կեր-
թան, այնքան կը սիրեն ջուրը և մաքրու-
թիւնը: Իրիկունները երկու երեք գաւաթ
օղի կը խմեն էրիկներնուն հետ դէմ դիմաց,
խսկ գինի բերաննին չեն դնէր: Աւելի կը
սիրեն վիզիթայի պտըտիլ քան թէ ընդունիլ
իրենց տունը: Ամառը թեթեւ կը հագուին,
խսկ ձմեռը ֆանէլա շապիկսիզ չեն ըլլար:
Իրենց էն սիրած բաններնին քուօշէի օրինակ
սովորին է:

ԳՈՀԱՐԻԿ

Իրենց անունին պէս նազիկ կըլլան միշտ,
նուրբ ու նիհար, ընդհանրապէս ջղուտ և
զգայուն: Հայելիին մէջը կը նային, ինք-
զինքնուն կը հաւնին, և սակայն միսին
պակասը դէմքերնին կը թթուեցնէ: Սոսկա-
լի նախանձոտ կըլլան Գոհարիկները, ուրի-

չին գեղեցկութիւնը, ճոխութիւնը, թուալէթը մոմի պէս կը հալեցնէ զիրենք: Ամուսնութեան ջերմ փափաքող կըլլան թէեւ, սակայն « աս սանկ է, ան նանկ է » ըսելով օր օրի ջուրը կը քաշուին: Թուալէթի համար կը մեռնին, և ինչ որ հագնին կը վալեցնեն պէտք է ըսել, պարզ պասմա մը, քալառի պէս կռնակներն կանցընեն և կը վալեցնեն ինչպէս ըսինք: Երբ ամուսնանան, իրենց ամուսինը չեն սիրեր, սուտ կը խնդան երեսին: Աւելի կը նախընտրեն ընկերուհիի մը հետ օրը քսան և չորս ժամ թավան իչին խօսուըռտել, քան թէ իրենց էրկանը հետ երկու բառ փոխանակել ննջասենեկին մէջ: Իրենց էն սիրած բաներնին կառք նստիլն է, ուր կը բազմին իրենց սենեկին պէս: Ճամբան քալած ատեննին կուզեն որ էրիկնին ետեւնուն քալէ աչճիի պէս, ու երբ զաւակնին գայ հասնի, նախանձներնուն չեն ուզեր կարգել:

Գ Ա Լ Ի Դ Ա

Այս անունը հիմա պարիք ըլլալուն՝ ընդհանրապէս ծերունի կըլլան անոնք, գլուխնին ծուռ պոյամալը և սխալած սուռաթիւր: Ոսկոր տէրի մարմին մը կռնենան անոնք, ու ակռաներնին թափած: Մազերնին պոյա կը դնեն, և իրենց էն մեծ թուալէթը գլուխնին կապած սիւնի կըլլայ միշտ: Թոռներնին այնչափ կը սիրեն որ, կը ծամեն կը ծամեն բերաննին կը դնեն: Հարսերնուն հետ շատ հմուկ կը վարուին, և չաքաթը չորս օր ժամ կերթան: Գերեզմանին մօտէն անցած ատեննին մինչև որ խաչ չի հանեն՝ չեն հանդստանար ու միշտ աչքերնին կարցունքոտի նայած ատեննին: Քսանէն ետեւնուն տարեկան երիտասարդներէն շատ կախորժին, և ընդհակառակը իրենց ծերունի ամուսիններնուն հետ միշտ խռոտ կըլլան, ինչ կերակուր որ ուտեն չեն հաւնիր, խախուէն անուշ կը խմեն ու հարսերնէն շան պէս կը դողան, իրենց միակ փափաքն է թոռներնին կարգել:

Ե Ր Ա Ն Ո Ւ Հ Ի

Դէմքերնէն աւելի բնութիւննին աղուոր կըլլայ միշտ: Խշկիկաբար բառին բուն նշա-

նակութեամբը և զաւակսէր: Իրենց թուալէթէն կը զրկեն, տղաքը կոկիկ պտտցնելու համար: Սակայն ամուսիններնուն երեսին սուտ կը խնդան, որովհետեւ Երանուհի անունը կրող կիները իրենց էրիկը չեն սիրեր: Իբր թէ՛ գրականութիւնը կը սիրեն, լրագիրը կը բանան, աչքերնին վրան կը տնկեն, սակայն, անդրաժարտիքի բաջալին քօշէն կը մտածեն: Դուրսը պտրտելէն աւելի տանը պուճախը կուզեն վայելել նէկլիժէ վիճակի մէջ: Իրենց թուալէթը բուռնայէն անդին չանցնիր, և ամենէն աւելի, էրիկներնուն ըրած ճիւղէն կախորժին: Իրենց էն մեծ փափաքը էրիկով դուրս ելլալն է ու միշտ քովէն կը քալեն ուշ ատեն թեւը մանալու յուսով: Իրենց էն սիրած բանը ծովի պանեօն է և մուխուֆճիութիւնը:

Զ Ա Ր Ո Ւ Հ Ի

Հակառակ գիրնալու փափաքներնուն, յաճախ սիւս սիւրի նիհար կըլլան . . . մեղքերնուն: Զարուհի անունը կրող մը քսանը հինգէն վար չի կրնար ամուսնանալ, և երբ պսակուի, անմիջապէս միւս կը կապէ: այսինքն եարաւիշ կըլլայ ամուսնութիւնը: Էրիկներնին այնքան կը սիրեն՝ որ աչքերնին վրանին կըլլայ, և պզտիկ հարբուի մը քրք ըլլան անոնք, հիւանդանոցի մայրապետի մը պէս կը դնեն կը վերցունեն: Ծերմակեղէնի այնքան նախանձախնդիր չեն ըլլար, բայց երբ ոտքերնին տունէն դուրս դնեն, անտուկնին բան չեն ձգեր կռնակնին կանցընեն: Դրամի մասին քիչ մը կծու կըլլան, և միշտ կուզեն իրենց ամուսնոյն շահ ու զէնին տեղեակ ըլլալ: Շաքաթը անգամ մը ոտք կը լուան և բուռնայի ջերմ աչակերտներէն կըլլան անսպասեալ: Երկու բան կը սիրեն Զարուհիները, մէյ մը էրիկնին, մէյ մալ պտուղները:

Ե Լ Մ Ո Ն Ի Կ

Այս անունը կրողները սոսկալի տիկնոգ կըլլան թէեւ, սակայն միամիտ ըլլալուն շուտով կը սմբին: Հագուստէ աւելի ուտելիքի մեռաբլը, և մտիկ ընկէ աւելի խօսող կըլլան ընդհանրապէս: Կամուսնանան կըռ-

նախնուն տատա մը կամ բառամանա մը ձգած փողոց ինչալու համար, և թէ իրենց ամուսինը մեքենայի մը տեղ դնելով բառ մը խօսք մը ընել չեն ի տար անոնց, առանց իրենց ճաշակը գաղափարը քննելու: Ձմեռները սոսկալի կը մսին, տակէն ֆանէլա վարտիք հագնելու չափ, և ամառները օրը երկու անգամ ճերմակեղէն կը փոխեն քրտինքէն: Աղէկ կերակուր եփել կը գիտնան էլմօնիկները, ինչպէս նաեւ տան կառավարութեան նախանձախնդիր: Աղջիկ կարգելու մէջ չեն յաջողիր, սակայն օլոս օլմազ երիտասարդի ալ քիթ չեն քաշեր: Իրենց էն հոգ տարած բանը լուացքն է, մէյ մ'ալ ձմեռուան յատուկ խալափներով թուռնները, զարկէք դուռը ո'ւ է էլմօնիկի մը և հոն պիտի գտնէք հինգ վեց տեսակ թուռն, զորս պարծանօք պիտի հրամայենք ձեզ:

ԸՌԸՆՏԻԿ

Այս անունը հին ըլլալուն, հիմակուան կնքահայրները շատ չեն գործածեր: Այս անունով հազիւ հարիւր հատ մաթուֆ ճատը կը գտնուի հրապարակին վրայ, որոնք այսօրուան վաղուան ճամբորդներ են: Ըռնտիկները, որոնք ընդհանրապէս տուտու կըսուին, անտանիկի շատուկներ են, նախանձու և քիթիգ: Ոչ ուտելիքի կը հաւնին ոչ ալ հագնելիքի, « մեղայ, ատ ալ պանս ըլլար, մեր վախտը ատոնց աղէկը կերեր, աղէկը կոնակնիս անցուցեր ենք » ըսելով բնաւ չեն քաշեր ու չեն հաւնիր: Երիտասարդներէն շատ կախորժին, մանաւանդ ձեռք պաքցնելու համար հոգի կուտան: Կարգուելու խօսքէն հազ կընեն, իսկ մեռելի, հիւանդութեան խօսուելուէն հազ: Օրը քսան անգամ դուրս կելլան . . . և հոգի կուտան թողնենուն վրայ, որոնք բիրէի պէս վրանին կը ցատկեն: Իրենց էն սիրած բանը խաչամայի ջուրի թիրիթն է, ինչպէս նաեւ պոռնուքի:

ԹԱԳՈՒԿ

Իրենք թէ և շատ աղուոր չեն ըլլար, սակայն թագուկ անուան տէրերը տաքուկ կըլլան: Աչքերնին աղուոր, հասակնին կարճ,

ընդհանրապէս դեղին մազերով և ճերմկուտիկ: Ընող ըլլող, ինչպէս կըսեն կիները, տան կոկիկութեան նախանձախնդիր, այնպէս որ, տունէ մը ներս մտնաք, և տեսնաք թէ չորս դին ծրի ծրի կը ծփայ, գիտցէք թէ այդ տանը մէջ թագուկ մը կայ անպատճառ: Կարգուելու համար այնքան փութկոտ չեն ըլլար թէ և, սակայն թագուկ անունով ազատ խուշի մը շատ գոռար է գտնել հրապարակին վրայ: Իրենց արդու դարդէն աւելի զաւակներուն հոգ կը տանին, լաւ կը գիտնան իրենց հանած ֆիստանէն պղտիկին հագուստ և էրիկուն ժաքէթէն սղոց բանթալօն հանելուն կերպը: Թէ և իրենք բամբասող չեն ըլլար, սակայն պոչերնուն կոխելու չի գար, ամիսներով կսկսին լեզունին երկարել իրենց դպչող անհատին հասցէին: Դուն ես ըսողին հոգի կուտան, և շատ կախորժին աղուորէն աւելի կոկիկ ըսել ալ իրենց վրայօք: Երկու բան կը սիրեն թագուկները, մէյ մը ձագուկներ, մէյ մ'ալ իրենց ամուսինները, որոնց վրայ հոգի կուտան:

ԺՈՋԵՑԻՆ

Անպատճառ Գաղիերէն և Յունարէն կը գիտնան այս անունը կողմները, ըսող խընդացող, բայց քիչ մը յըվոռ: Տանը մէջ սիւսէն ուրիշ բանի ձեռք չեն զարներ, ու հոգի կուտան մէջքերնին հինգ փարանոց սիւսիքի չափ սեղմելու համար: Իրենց սեռակիցներէն աւելի երիտասարդներէն կ'ախորժին, որոնց հետ երբ գտնուելու ըլլան, ամէն բան կը մոռնան, կը վերանան: Թեթե, թիթեռնիկի պէս, ու խօսուն սոխակի պէս, այս է ժողէֆիներու նկատելի յատկութիւնները: Ամուսնանալէ աւելի ժամանակ անցընելը կը սիրեն, սուսուք, տանս, բառքի տը բիգիո, իրենց էն սիրած զօսանքներն են, ու գիշերը ցերեկէն աւելի կը սիրեն: Իրենց էն մեծ թուալէթը մազերնին է, երկու ժամէն մազ կը չտկեն ու հինգ վայրկեանէն կը հագուին: Յաւալի է ըսել սակայն, որ իրենց մայրերը սպասուհիի պէս կը գործածեն ու հայրիկին բնաւ կարեւորութիւն չեն տար: Իրենց էն սիրած բանը թեթեի պտոյտն է, ինչպէս նաեւ նամակագրութիւն:

Ի Ս Վ ՈՒ Հ Ի

Ահա տան տիկին անուն մը, որոնց տէրերը ընդհանրապէս համեստ կըլլան: Ինքզինքներնուն կը զրկեն ուրիշի համար, և հոգի կուտան բարիք ընելու համար: Իսկունհի անունին տէրը անպատճառ աղուոր ալ չըլլան չիրին կըսուին, և բնոյթով անգուգական: Իրենց ամուսինները որչափ խիստ ըլլան սիրով կը տանին ու չեն գանգատիր: Կերակուրէն աղէկ անուշ եփել կը գիտնան, այնպէս որ Իսկունհի մը եփած չէվիրմէն անկարելի է որ խռովը ըլլայ: Միւսէն աւելի բանջարեղէնը և անուշէն աւելի թթու կծու կը սիրեն: Աղջիկներէն ատենին սէրսէմ, իսկ ամուսնանալէն վերջ աչքիդ մէջը նայելով սիրտդ կը զննեն: Շատ չեն սիրեր փողոց ելլալ, սակայն եկեղեցւոյ քամբանային ձայնին խաչ հանելու չափ հաւատով են: Զաւակսիրութեան մէջ մէկ հատիկ կըլլան անոնք, ու միշտ բարեխօսը հայրիկին և զաւակին միջև: Ֆաթուռա միսս ալ հագնին սիրով կը տանին, բայց միշտ կոկիկ կուզեն երեսնալ, դուրսէն աւելի իրենց ամուսիններնուն: Իրենց էն սիրած բանը ժամանակին տոմարէս բէստիլին շինել և քիւլէրին ըռաֆը տասը քաչ սապօն գտնուիլն է:

Լ Ի Ի Ս Ի

Այս անունին տէրերը նորաբոյս կոկոններ կըլլան, քանի որ մեր մէջ օտար անուն գործածելը նուիրօթէ եղած է հիմա: Անպատճառ աղէկ դաշնակ կը զարնեն և խնդացած ատենին երեսներին ջուխտու ջուխտ կըլլայ: Ամէն բանէ աւելի կօշիկի մեռաքը կըլլան, ինչպէս նաև գոյնգոյն բոստիլաներու, որոնցմով կը պճնեն իրենց հագուստները: Տունէն աւելի փողոցը կը սիրեն և դուրս ելլալու համար հրամանի չեն սպասեր իրենց ծնողքէն: Էն հոգ տարած բաներին, եղունգներն է, զորս կերկնցնեն, կը մաքրեն ու ժամերով կղքալին ատոնց համար: Բունը բնաւ չեն սիրեր, ալ միշտ ընթերցանութիւնը, որուն մէջ amour ամուր մը զետեղուած ըլլայ գիրքին ճակատը: Շոգուլային աղէկը կը սիրեն ու քօլաին ըն-

տիրը կընեն . . . եթէ ուզելու ըլլան, Եղբայրնին կը յարգեն, զիրենք դուրս հանելուն համար: Օ տը քօլօնով կը սրբուին ու վիճեկով կը սանտրուին: Լիւսիւներու էն սիրած բանը ակնոցաւոր զիւպպէի մը հետ ամուսնանալն է ինչպէս նաև բէշ վեր առնելով ա ժուռ գուլպայ ցուցադրելը:

Խ Ո Ս Ր Ո Վ Ի Դ ՈՒ Խ Տ

Պայաթէն պայաթ կըլլան ասոնք, ընդհանրապէս հինէն մնացած ու նէկիթէ: Վարպետ տօմարէս սալաթասին սոխով շինելու, ինչպէս նաև վարտիք ձեւելու մէջ: Տղեն զութիւնը կարծես իրենց անունին կցուած է, այնպէս որ Խոսրովի դուխտ անունով դեղեցիկ մէկը չես կրնար գտնել: Ամուսիննին այնքան կը սիրեն որ ցերեկը անոր հոն չեղած ատենը անոր աղտոտ գուլպաները հոտուրտալով կը գոհանան: Երբ դուրս պտոյտի ելլան, անպատճառ էրկնուն թուր կը մըտնան ու չորս դիւին կը նային: Սկաթիւնուն էօքէնները միշտ ծուռ կըլլայ ու բաշալը վարտիք կը հագնին, ժառքիւնին վրայ գաղափար չունենալուն: Ոտքերին անպատճառ եէլ կունենան ու աչքերին կը վազէ: Վրանուն միշտ կողի մը հոտ կուգայ հակառակ էքսթռէ գործածելուն, որ բուսմարթէթիւն կառնեն: Ֆիստանուն վօլան մը կը խնայեն, տօլմային եաղը չեն խնայեր: Ընդհանրապէս գէր կըլլան ու ձեռքերին նասքըլը: Իրենց էն սիրած բանը բաղնիքն է, մէյ մ'ալ պոստէլի չապիկը:

Ծ Ի Ա Ծ Ա Ն

Էրիկ ծեծող կըլլան անպատճառ, մազերնին ցիր ու ցան, բէշերնին մէջքերնուն խօթած և ակռաներնուն վրայ կապ կանանչ միտեայ կապած: Զաւակ կը ծնին, մօրերնուն կամ կէսուրնուն համար, իրենք բանի չեն խառնուիր: Այնքան կոխը կը սիրեն որ, «գրացիլին կատուն մեր դուռէն անցաւ» ըսելով կսկսին բանալ բերաննին, որ կէս գիշերին մինչև չի գոցուիր: Երկու տարին մէկ անգամ հագուստ կը շինեն և երեք տարին անգամ մը գլխարկ: Ուտելիքի համար կը մեռնին, իսկ տղոցը բանթալօնին

ծակը գոցելը պատիժ կը սեպեն իրենց: Տա-
նը մէջ իրենք կը հսկեն և ամուսիններն կա-
տուի պէս կը մտնան կեղան դողալով: Ե-
րեսնուն բուռն անպակաս կընեն, իբրե-
թուալէթ: Բնութիւններն նալլէթ, խօս-
ուածքներն հիւլէթ կըլլայ անպատճառ: Տէր
պապաներն կը պաշտեն ու հացագործին
ծիլիկ չեն խնայեր, զրամի խօսք ընել չտա-
լու համար: Իրենց էն սիրած բանը, Աստ-
ուածածներն խառթալի բանային է, իսկ
ձմեռը սաճ մանկալը:

Կ Ի Ի Լ Ի Ի Կ

Հակառակ վարդ-նմանակ անուներն ընդ-
հանրապէս թթու կծու դէմք մը կունենան,
չատ կը քրտնին, այնպէս որ երկու անգամ
հագած պլուզնուն թեւերուն տակը կը մա-
չեցնեն անպատճառ: Կարգուելու խենդ կըլ-
լան, և անգամ մը որ գլուխ գլխի տան
էրկան մը հետ, անկէ անդին աշխարհ կը
մոռնան: Գուլպաներնուն խոնձերը միշտ
վար կախուած կըլլայ, ինչպէս նաև ականջ-
ներնուն քովէն թուրթամ թուրթամ մազեր-
նին: Լեզուանի կըլլան Կիւլիկները և լա-
կու կընեն կընիկ կընկան հետ, որ ան-
պառ խըսխանձութիւնը կըլլայ նիւթ: Տա-
ղաւարէ տաղաւար եկեղեցի կը դիմեն և
խաղողը չօրհնուած չեն ուտեր: Պաղտաշ
նստիլը կը սիրեն, ոտքերնին առ հասարակ
տիւզ տապան կըլլան: Ծիպիկիկի տակ չեն
կրնար պառկիր, և ասոր համար է որ Կիւ-
լիկներու երեսը խալպուրի պէս ծակ ծակ
կըլլայ սիւրբիսինէկի կէրուկէն: Իրենց էն
սիրած բանը բարլիճան տօլմասին է, ինչ-
պէս նաև տանա բալասին:

Հ Ո Ռ Ո Փ Ի Կ

Չուպուխի պէս նուրբ, և սագի պէս ան-
ձայն կըլլան ասոնք ալ: Այնքան արդու-
զարդը կը սիրեն, որ գիշերը քօռսէով կը
պառկին: Չաւակներն բնաւ չեն սիրեր, այլ
միշտ առանձին պատուհանին առջև քօռէ
կուզեն բանիլ: Թթու կծու չեն սիրեր, այլ
հոգի կուտան միսին: Գէր կիներէն կը նա-
խանձին, և հայելիին մէջ նայելով անպատ-
ճառ քէօշէ մը կը գտնան «աղուոր եմ» ը-

սելու համար ինքզինքնուն: Աղուոր չիքի
ընել գիտեն Հոռոփիկները, և արեւէն չատ
կը սոսկան, եթէ կարելի ըլլայ տանը մէջ
հովանոց կուզեն բանալ: Օրը չորոտ անգամ
կը լուացուին և ութը անգամ բուռնա կը
քսուին մանաւանդ ամառները: Պտուղի հա-
մար խենդ կըլլան, ինչպէս նաև գունաւոր
ժառքքիւններու: Իրենց էն սիրական բանը
ճափճափի գլխարկ կընին է, ինչպէս նաև
էրկինուն բօթմօնէէն մանտրուք գողնալը:

* * *

Ինչպէս մեր նախաբանին մէջ ըսինք,
կանանց անուններուն վրայ մեր այս կար-
ծիքներէն պէտք չէ որ առնուին մեր ընթեր-
ցուիները, կատակի ձեւով գրուած այս տո-
ղերէն պէտք չէ գողերու մատնուիլ:

Յաւալին այն է որ այբուբէնի կարգաւ
գրուած անուններուն շարքը մինչև Հ գիրը
կրցինք սեղմեցնել մեր սուղ էջերուն մէջ,
և անոնք որ այդ երանելի գիրէն վերջը
կուգան, ազատած եղան մեր քաջքուքէն,
այս ալ իրենց բաղդին:

Հազար ներողամտութեամբ կուգամ ստո-
րագրել

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՌՈՏՈՍԹՈՑ. — Միհրան Ժիզմէճեան. —
Կը զարմանա՞նք չիտակը. այսքան ալ առաւ
փախաւութիւն, տեսնուած և լսուած բան
չէր: Մեր բաժանորդներէն գանձած դրամ-
նիդ կրցի՞ք մարսելու: Խիպն ու ամօթն ալ
սահման մը ունի:

ԵՕՁԿԱՏ. — Օննիկ էֆ. Չարքընեան. —
Դեռ սպասե՞նք, ինչո՞ւ դրամ չէք ղրկէր:

ՄԱՐԱՇ ԳՐԻԳՆԱՐ ԲԻՂԻՍԷ—Ա. Չ. էֆ. —
1905 Յունիսէն հաճեցէք բաժնեգինը ղրկել:
ՍԷԼԱՆԻԿ. — Բ. էֆ. — Պիլէճիկէն դեռ
դրամ չի ղրկեցին, հաճեցէք դուք կարգադ-
րել հաշիւը:

ՄԱԼԿԱՐԱ. — Տ. Ս. էֆ. — 1905 Յու-
նիսէն հաճեցէք ղրկել դրամը:

ԳՕՆԻԱ. — Գ. Պ. էֆ. — Օգոստ. 1 էն
կը պարտիք, հաճեցէք ղրկել բաժնեգինը:

ՏԻՄԷԹՕԳԱ. — Ն. Տ. էֆ. — Նոյնպէս:
ՍԷԼԱՆԻԿ. — Յ. Ա. Մ. էֆ. — 1905

Ապրիլ 1 էն կը պարտիք, հաճեցէք ղրկել:

ኪ ኒ ጉ በ ኪ ዩ

Մարդ մը , լոկ հարստութեանն համար ,
կառնէ անանկ կին մը որ կաղ , միականի
և կողզ կըլլայ միանգամայն ։ Բարեկամնե-
րէն մին երբ կը հարցնէ օր մը իրեն թէ՝

— Ինչո՞ւ առիր այս կաղը :

— Ինչու չառնէի, կը պատասխանէ մեր մարդուկը, անիկա այս վիճակին մէջ դուրս չեյնէր և աղւոր աղւոր տունը կը նստի :

— Աղէկ, բայց աչքին մէկն ալ կոյր է :

— Ի՞նչ փնաս ունի, աւելի աղէկ չէ՞ որ
բոլոր պակասութիւններս չի տեսներ :

— Իրաւունք ունիս, բայց ատ կոնաւկի
կուզի՞ն ինչ պիտի ըսես :

— Զարմանալի բան . . . ասիկա ճշմարտագույնս երկնքի հրեշտակ է՝ ես, հարկաւ պակասութիւն մըն ալ պիտի ունենայ:

✱

✱

Մօր ու գաւկի մը մէջ .

Մայրը . — Ստեղծողին զօրքին մեռնիւմ,
ասանկ աննաման աղջիկ չըլլար , եկուր տը-
ղա'ս մի փայտցներ , նշանաուտք րնենք :

Զաւակը . — Բանի՞ տարու կայ :

Մայրը . — Իրեն հարցուցի, չգիտեր կոր,
բայց քսան, քսանըմէկ մը ըլլալու է :

Զառակը . — Խարուներ ես մարի'կ , ա-
նիկա անպատճառ եռտունը անցուկ պիտի
ըլլայ :

Մայրը . — Չէ՛ , զաւա՛կս , ինչո՞ւ ա-
տանկ կրտսս :

Զառակը . — Դուն չես գիտեր մարիկ ,
կհեծրը ատ տարիքը մտածնուն պէս « չեմ
գիտեր » ըսելու կսկսին :

✱ ✱ ✱

Դարձեալ մօր ու զաւկի մը մէջ .

Մայրը . — Տղա՛ս, չըլլայ որ նորէն սըր-
ճարան երթաս և ըսես թէ մայրս կնոջս հետ
կոխւ ըրած է, ատ փօստալը աշխարհին
ծաղր ու ծանակ ըրաւ ինծի :

Զառակը . — Չէ՛ մարիկ չէ՛, դուռն հոգդ
անգամ մի՛ ընեւր , դուռ դրացի ամէնքն ալ
հասկցած են արդէն ձեր երկուքին ալ ինչ
ապրանք ըլլալը : Ես , ե՛րբ որ բերանս բացի
ու Ձեր աղէկութեան վրայ խօսեցայ , ա-

մէնքն ալ՝ ապուշի տեղ դրած ինծի՝ քիթիս
խնդացին, խեղձի եւ որ անդամ մըն ալ բե-
րանս առնեմ Զեղ :

✱ ✱ ✱

Էրիկ Կնիկան Ռէջ .

ԿՅԻԿԵ. — Մա'րդ, ի՞նչ է աս քու բռն-
նած ճամբադ, շատերը նորէն գինետունէն
եյնելդ տեսեր են :

— Երիկը . — Հապա ի՞նչ կուզէիր որ
տեսնէիր , հո՞ն մնալս : Թ. ՄԻՔԱՅԷԼ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ᐅ ᐱ ᑦ ᓂ ᑭ ᕐ

Վարժարանիս ի է. արեւելացի կրկնի
Սեպտեմբեր 6ին (Ն. Տ.): Հաստատուեալս
Տնօրէն Վեր. Ռ. Զեյմպերս եւ իր Տիկինը
արդէն վերադարձած են իրենց երկամեայ
բացակայութենէն, եւ յառաջիկայ արի ու-
սուցչական խումբին վրայ պիտի աւելնան
Քանասայի մէկ նշանաւոր համալսարանէն
երկու Ամերիկացի շրջանաւարտներ, որոնց
մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ անու-
սական դասընթացը:

Ասպիտակները բնականաբան խնամք կը վա-
յելեն գիշերօթիկ ուսուցիչներուն, հաստա-
տութեան մասնաւոր բժիշկին հսկողութեան
եւ Տիկին Զեյնալըսի մայրական հոգածու-
բեան ձեռք :

Գիւերօրիկ աշակերտներուն շարքոսակն է 16 Օսմ. ոսկի, 8 ոսկին Սեպտեմբերի սկիզբը եւ մնացած 8 ոսկին Յունուարի վերջերը մնալի :

Վարժարանն յառուկ ուսուցիչ մը ունի գործիական երաժշտութեան համար, այս դասին համար արեւկան մասնաւոր վճարումն է 1 1/2 ոսկի Օսմ.

Աւելի տեղեկութիւններու համար դիմել
Մր-Բիթի Պալար-Հաուս, Կ. Պոլիս, կամ
Տնօրինութեան՝ Պարտիզան :

Այն առակերտները որոնք Պոլսեւն եկած
աւետնիւն կէս գնով տոմարկ առնել կուզեն,
պէտք է որ մինչեւ Սեպտեմբեր 1, Ը. Ն. ի-
րենց անուանները արձանագրել սաճ Գրիգոր
հեփ. Շահպաղեանի, որ կը գտնուի ի Պալայ-
Հաւուց քիւ 10:

10—4

Արժօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵՆԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի ցառեւի թիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԶԵՆՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համան, Թօխաղեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տու-
կունութեամբ և զինքնու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձեռնուած յատուկ ընտիր հա-
գուսնեցու, կանանց քեյրոյիներու և
տղայոյ չիք և գիմացկուն փոքրիկներու
ծօխ մթերք մը պատրաստ ունի, որ
շերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նանց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին:

49—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն ելներ, գոյներն չեն նետեր,
ջուրի և անձրեւի կը դիմանան, միւկ-
ները կը ջնջեն ևն. ևն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արշընը 10—15 փարայ:

Ներսի և դուրսի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արշընը 20—30 փարայ:

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց դիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է սոյն գներով իր վը-
րոյ առնել ամէն դործ, թէ ներկն և
թէ գործաւորոյցէլ մէջն ըլլալով:

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պազըր-
ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան: — Գա-
ւառները գործակալներու պէտք կայ,
գիւրամատչելի պայմաններով:

14—20

ՖԷՆԻՔՍ ՕՔՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Իրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Քրանք

ՀՐԳԵՀԻ ՃԻՒՂ

Իրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Քրանք

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք:
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային
կանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողկնաւի՝ եւ ա-
ռագատանաւի վրայ:

Ընկերութեան զբաղմունքն է ՔՐԷՏԻ ԼԻՍԷՆ, Ընդհանուր գործակալութեան զբաղմուն-
քն է Պոլիս, Ալեանաք Խան, Թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիպգոր ներկայացուցիչ


Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱՃԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

Ե Ի

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեԳափու, ձեյալ-Պեյ խան, քիւ 10

Ա Ն Տ Ե Լ Ի Պ

Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Ա Բ Ա Ր



Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամֆոննի
եւ Երկկողմ Բլազներու, Կեդրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պէրիւ-
էՖէնտիի կից, Եալտըզ խանի տակ
քիւ 2: Մասնաճիւղ Պահճե Գաբու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանայ տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
զրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլազներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բուսական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
Եգրոնատեղին: